

**Տեղեկանք  
2017 թվականի գերակա խնդիրների և միջոցառումների ծրագրի առաջին կիսամյակի իրականացման արդյունքների**

<b>Միջոցառումների իրականացման արդյունքների վերաբերյալ</b>				
<b>Պատասխանատու մարմինը</b>	<b>Ծրագրի կետը</b>	<b>Միջոցառումների անվանումները</b>	<b>Միջոցառումների կատարման արդյունքները</b>	<b>Կարծիք</b>
1	2	3	4	5
<p>ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն</p>	<p>Հավելված 1, կետ 57</p>	<p>«Հայաստանի Հանրապետության մարզերի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարություններին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը</p>	<p>ՀՀ բոլոր 10-ը մարզերի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունների նախագծերը 20.03.2017թ.-ի N 01/15.1/1663-17 գրությամբ ներկայացվել են ՀՀ կառավարության աշխատակազմ: Համաձայն ՀՀ վարչապետի հանձնարարականի՝ Նախագիծը մեկ անգամ ևս քննարկել ՀՀ արտակարգ իրավիճակների, ՀՀ մշակույթի, ՀՀ առողջապահության և ՀՀ ֆինանսների նախարարությունների հետ համատեղ: Քննարկման արդյունքներով լրամշակված Նախագիծը 26.06.2017թ.-ի N 01/15.1/3979-17 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ:</p>	
	<p>Հավելված 1, կետ 58</p>	<p>«Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստաթղթերի համալրման, հաշվառման, պահպանության և օգտագործման միասնական կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը</p>	<p>Ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ 28.02.2017թ. թիվ 01/21/1166-17 ելից գրությամբ: ՀՀ կառավարության աշխատակազմի իրավաբանական վարչությունում տեղի ունեցած քննարկման արդյունքում որոշվել է սույն նախագիծը համաձայնեցնել նաև ՀՀ Նախագահի աշխատակազմի և Երևանի քաղաքապետարանի հետ, ինչպես նաև միավորել և հաստատել երկու կետերում (58 և 62) սահմանված կարգերը ՀՀ կառավարության մեկ ընդհանուր որոշմամբ: Քննարկման արդյունքների հետ կապված ստացվել է ՀՀ վարչապետի՝ 24.03.2017 թ. թիվ 02/24.12/7030-17 հանձնարարականը: Ի կատարումն ՀՀ վարչապետի հանձնարարականի՝ գրություններ են ուղարկվել ՀՀ Նախագահի աշխատակազմ և Երևանի քաղաքապետարան: Այնուհետև միացվել են Հավելված 1-ի 58 և 62 կետերով սահմանված կարգերը ՀՀ կառավարության մեկ ընդհանուր որոշման նախագծում և 30.03.2017 թ. թիվ 01/21/1927-17 ելից գրությամբ ներկայացվել ՀՀ արդարադատության</p>	

			Նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության: Արդյունքները ամփոփելով՝ նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել 12.04.2017թ. թիվ 01/21/2210-17 ելից գրությամբ:	
Հավելված 1, կետ 59	«Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականության 2017-2021 թվականների ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	ՀՀ կառավարության կողմից 23.03.2017թ. հավանության է արժանացել «Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականության 2017-2021 թվականների ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության N12 արձանագրային որոշումը:		
Հավելված 1, կետ 60	«Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից կատարված աշխատանքների գնահատման կարգը, Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից կատարված աշխատանքների գնահատման չափորոշիչները, ինչպես նաև դրանց հիման վրա ձևավորվող կողմնորոշիչ միավորները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	Նախարարության աշխատակազմի կողմից մշակվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մայիսի 21-ի N 562-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որը 06.03.2017թ-ի N01/15.1/1322-17 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ: Համաձայն ՀՀ վարչապետի հանձնարարականի՝ Նախագիծը ևս մեկ անգամ քննարկել ՀՀ ֆինանսների, ՀՀ արդարադատության նախարարությունների հետ, ինչպես նաև ՀՀ մարզպետարանների հետ, հաշվի առնելով ՀՀ Նախագահի աշխատակազմի առաջարկությունները: Նախագծի լրամշակված տարբերակը գտնվում է վերը նշված մարմինների հետ քննարկման փուլում:		
Հավելված 1, կետ 61	«Վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	«Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը ներկայացվել են ՀՀ կառավարության աշխատակազմ՝ 06.05.2017թ. N°01/16.1/2770-17 գրությամբ: Նախագծով առաջարկվող ծրագրերում ներգրավված է լինելու ՀՀ Արագածոտնի, ՀՀ Գեղարքունիքի, ՀՀ Լոռու, ՀՀ Կոտայքի, ՀՀ Շիրակի, ՀՀ Սյունիքի, ՀՀ Վայոց ձորի, ՀՀ Տավուշի մարզերի		

			թվով 325 համայնք, որոնց միավորման արդյունքում ձևավորվելու է թվով 34 համայնք: Օրինագիծը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 09.06.2017թ.:	
Հավելված 1, կետ 62	«Էլեկտրոնային փաստաթղթա-շրջանառության միասնական համակարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	Հավելված 1-ի 58 և 62 կետերը միացվել են ՀՀ կառավարության մեկ ընդհանուր որոշման նախագծում և 30.03.2017 թ. թիվ 01/21/1927-17 ելից գրությամբ ներկայացվել ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության: Արդյունքները ամփոփելով՝ նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել 12.04.2017թ. թիվ 01/21/2210-17 ելից գրությամբ:		
Հավելված 1, կետ 63	«2017-2020 թվականներին տարած-քային զարգացման առաջին գործառնական ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	29.06.2017թ. թիվ 01/15.1/4094-17 գրությամբ ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի թիվ 122-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որով նախատեսվում է Հավելված 1-ի 63-րդ կետի կատարման ժամկետը հունիսի առաջին տասնօրյակից տեղափոխել հուլիսի 3-րդ տասնօրյակ՝ հաշվի առնելով աշխատանքի ծավալը և ՀՀ վարչապետի ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունում տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ տրված հանձնարարականը:		

**Գերակա խնդիրների իրականացման արդյունքների վերաբերյալ**

<b>Պատասխանատու մարմինը</b>	<b>Ծրագրի կետը</b>	<b>Գերակա խնդիրները</b>	<b>Գերեկա խնդրի կատարմանն ուղղված քայլերը</b>	<b>Կարծիք</b>
1	2	3		5
ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	<b>Հավելված N 2</b>  <b>Կետ62.</b>	<b>Տարածքային կառավարման արդյունավետության բարձրացում և համակարգի արդիականացում</b>  - Տարածքային կառավարման հայեցակարգի մշակում	Մշակվել է «Տարածքային կառավարման հայեցակարգի ընդհանրական նկարագիր» կոչվող փաստաթուղթը: Փաստաթուղթը սահմանել է տարածքային կառավարման ուղղենիշները և ուրվածգել հայեցակարգի հիմքում դրվող հիմնական	

		<p>- Հայեցակարգի կիրարկումն ապահովող իրավական ակտերի մշակում</p>	<p>բովանդակությունը: Վերոնշյալ փաստաթղթի բովանդակային հարցերը արծարծվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի կողմից՝ ՀՀ Նախագահին ներկայացվող տարեկան հաշվետվության շրջանակներում:</p> <p>Մինչև տարածքային կառավարման հայեցակարգի ընդունումը, վերջինիս կիրարկումն ապահովող որևէ իրավական ակտի մշակման անհրաժեշտություն չկա:</p>	
	<p><b>Հավելված N 2</b></p> <p><b>Կետ63.</b></p>	<p><b>Վարչատարածքային բարեփոխումների շարունակականության ապահովում</b></p> <p>- խոշորացման գործընթացի կիրարկումն ապահովող անհրաժեշտ իրավական ակտերի մշակում</p> <p>- իրազեկում, քննարկումներ ՀՀ բոլոր մարզերում (բացի Արմավիրի մարզից) նախատեսվող խոշորացվող 18 փնջերում ներառված մոտ 150 համայնքներում՝ տեղական ինքնակառավարման մարմինների և բնակչության հետ խոշորացման գործընթացի վերաբերյալ: Խոշորացվող</p>	<p>«Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը ներկայացվել են ՀՀ կառավարության աշխատակազմ՝ 06.05.2017թ. №01/16.1/2770-17 գրությամբ:</p> <p>Նախագծով առաջարկվող ծրագրերում ներգրավված է լինելու ՀՀ Արագածոտնի, ՀՀ Գեղարքունիքի, ՀՀ Լոռու, ՀՀ Կոտայքի, ՀՀ Շիրակի, ՀՀ Սյունիքի, ՀՀ Վայոց ձորի, ՀՀ Տավուշի մարզերի թվով 325 համայնք, որոնց միավորման արդյունքում ձևավորվելու է թվով 34 համայնք: Օրինագիծը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 09.06.2017թ.:</p> <p>Համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների և բնակչության իրազեկման նպատակով՝ նախագիծն ուղարկվել էր ՀՀ մարզպետարաններ և տեղադրվել «www.e-draft.am» և «www.mtad.am» համացանցային կայքերում: «www.e-draft.am» կայքում նախագիծը դիտվել է 3259 անգամ, ունի 48 կողմնակից և 17 ընդդիմախոս: Նախագծի վերաբերյալ համայնքներից, մարզպետարաններից և վերոնշյալ կայքից ստացված առաջարկությունները քննարկվել են,</p>	

		<p>համայնքներում ծրագրային գաղափարների փաթեթների պատրաստում</p> <p>- խոշորացման ծրագրում ներառված համայնքներում միասնական ցանցային կառավարման էլեկտրոնային համակարգերի ստեղծման աշխատանքների իրականացում</p> <p>- խոշորացման գործընթացի իրականացում</p>	<p>դրանց մի մասը տեղայնացվել է նախագծում: Նախարարության կողմից կազմված ժամանակացույցի համաձայն՝ նախարարության բարձրաստիճան պաշտոնյաներն այցելել են խոշորացման ծրագրերում ընդգրկված համայնքներ, կազմակերպել քննարկումներ՝ այդ համայնքների ՏԻՄ-երի և բնակիչների հետ:</p> <p>Ուսումնասիրվում են խոշորացման ծրագրերում ներառված համայնքներում միասնական ցանցային կառավարման էլեկտրոնային համակարգերի ստեղծմանն անհրաժեշտ ռեսուրսները, և ըստ այդմ՝ յուրաքանչյուր համայնքի համար մշակվում գործողությունների ծրագրեր:</p> <p>«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ընդունված 09.06.2017թ) 7-րդ հոդվածով խոշորացման ծրագրերում ներառված համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների օր է սահմանվել ս.թ. նոյեմբերի 5-ը: Նախընտրական գործընթացների կազմակերպման աշխատանքները գտնվում են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության հսկողության ներքո: ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի, նախարարի առաջին տեղակալի և նախարարության այլ պաշտոնյաների կողմից իրականացվում են այցեր՝ բոլոր խոշորացվող համայնքներ:</p>	
	<p><b>Հավելված N 2</b></p> <p><b>Կետ64.</b></p>	<p><b>Մարզերի մրցակցային առավելությունների բացահայտում և տարածքային զարգացման ուղիների ուրվագծում</b></p> <p>- Մարզերի մրցակցային առավելությունների հստակեցում</p>	<p>ՀՀ մարզերի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունների նախագծերի մշակման</p>	

		<p>- Մարզերի տարածքային զարգացման ռազմավարությունների մշակում</p> <p>-2017-2020 թթ. տարածքային զարգացման առաջին գործառնական ծրագրի մշակում և մեկնարկ</p>	<p>աշխատանքների շրջանակներում՝ բացահայտվել են մարզերի մրցակցային առավելությունները, ըստ ոլորտների ներկայացվել են իրավիճակային վերլուծության արդյունքները, ինչպես նաև ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և սպառնալիքները: Նշված վերլուծությունների հիման վրա ռազմավարությունների նախագծերում նկարագրվել են նաև մարզերի զարգացման նպատակները և գերակայությունները:</p> <p>«Ք թվոր 10-ը մարզերի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունների նախագծերը 20.03.2017թ.-ի N 01/15.1/1663-17 գրությամբ ներկայացվել են ՀՀ կառավարության աշխատակազմ: Համաձայն ՀՀ վարչապետի հանձնարարականի՝ Նախագիծը մեկ անգամ ևս քննարկել ՀՀ արտակարգ իրավիճակների, ՀՀ մշակույթի, ՀՀ առողջապահության և ՀՀ ֆինանսների նախարարությունների հետ համատեղ:</p> <p>Քննարկման արդյունքներով լրամշակված Նախագիծը 26.06.2017թ.-ի N 01/15.1/3979-17 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ:</p> <p>29.06.2017թ. թիվ 01/15.1/4094-17 գրությամբ ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի թիվ 122-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որով նախատեսվում է Հավելված 1-ի 63-րդ կետի կատարման ժամկետը հունիսի առաջին տասնօրյակից տեղափոխել հուլիսի 3-րդ տասնօրյակ՝ հաշվի առնելով աշխատանքի ծավալը և ՀՀ վարչապետի ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունում տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ տրված հանձնարարականը:</p>	
	<p><b>Հավելված N 2</b></p> <p><b>Կետ65.</b></p>	<p><b>ՀՀ արխիվային գործի բնագավառում արխիվային ծառայությունների մատուցման էլեկտրոնային</b></p>		

	<p><b>համակարգի ներդրման իրականացում</b></p> <p>- Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի ու Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի համատեղ հրամանի ընդունում՝ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման կողմից էլեկտրոնային հարցում կատարելու և «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպությունից հարցմանը էլեկտրոնային պատասխան տրամադրելու կարգը հաստատելու մասին:</p> <p>-Հայաստանի ազգային արխիվի և նրա տարածքային ստորաբաժանումների կորպորատիվ ցանցի ստեղծում և դրա տրամաբանական միացում այն բոլոր պետական մարմինների ցանցերին, որոնք օգտվում են արխիվային տեղեկատվությունից:</p> <p>- Հայաստանի ազգային արխիվում իրավաբանական և ֆիզիկական անձանցից արխիվային տեղեկություն (այդ թվում՝ միասնական տեղեկության-տեղեկանքի) ստանալու համար դիմումների առցանց՝ ՀԱԱ-ի պաշտոնական կայքէջի միջոցով ստացում, այդ թվում՝ նաև էլեկտրոնային վճարման</p>	<p>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի կողմից համատեղ իրականացված աշխատանքների արդյունքում մշակվել և արդեն գործում է քաղաքացիների աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկատվության փոխանակման էլեկտրոնային համակարգը:</p> <p>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2017թ.-ի փետրվարի 9-ի թիվ 16-Ա/1 և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2017թ.-ի փետրվարի 13-ի թիվ 34-Ա համատեղ հրամանով հաստատվել է վերոնշյալ տեղեկատվական համակարգի միջոցով տեղեկատվության փոխանակման հետ կապված հարաբերությունները սահմանող կարգը:</p> <p>2017 թվականի հունիսի 28-ի N 01/21/4057-17 ելից գրությամբ ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել գրություն, որով հայտնել ենք, որ ստեղծվել է «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի և նրա տարածքային ստորաբաժանումների կորպորատիվ ցանց, որը միաժամանակ միացվել է այն բոլոր պետական մարմինների ցանցերին, որոնք օգտվում են արխիվային տեղեկատվությունից: ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից ընդունվել է ի գիտություն:</p>	
--	---	---	--

	<p><b>Հավելված N 2</b></p> <p><b>Կետ66.</b></p>	<p>համակարգի ներդրում:</p> <p><b>Հայաստանի Հանրապետության մարզային ենթակայության առողջապահական համակարգի օպտիմալացում</b></p> <p>- ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի բժշկական կենտրոնի, Ծաղկահովտի բժշկական կենտրոնի, ՀՀ Կոտայքի մարզի առողջության առաջնային պահպանման կենտրոնների և ՀՀ Շիրակի մարզի «Սամարիթեր» վերականգնողական կենտրոնի կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացման ուղղությունների և ֆինանսական վիճակի վերլուծություն:</p> <p>- վերլուծության արդյունքներով Աշտարակի բժշկական կենտրոնի շենքային պայմանների օպտիմալացման, բարե-</p>	<p>2017 թվականի հունվարի 12-ի թիվ 01/15.1/79-17 գրությամբ ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել «Սամարիթեր վերականգնողական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին գույք նվիրաբերելու և ընկերության կանոնադրական կապիտալը նվազեցնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ): ՀՀ վարչապետի 2017 թվականի մարտի 02-ի թիվ 02/24.13/4762-17 հանձնարարականով Նախագիծը վերադարձվել է լրացուցիչ քննարկման:</p> <p>ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի բժշկական կենտրոնի, Ծաղկահովտի բժշկական կենտրոնի, ՀՀ Կոտայքի մարզի առողջության առաջնային պահպանման կենտրոնների օպտիմալացման նպատակով կատարվել են վերլուծություններ, մասնավորապես՝ ուսումնասիրվել է առողջապահական կազմակերպությունների ծանրաբեռնվածությունը, կադրային հագեցվածությունը, բյուջեները, կրեդիտորական և դեբիտորական պարտավորությունները (դրանց առաջացման պատճառները), օպտիմալացման դեպքում կրճատվող աշխատակիցների թիվը, նախատեսվող խնայողությունների չափը, օպտիմալացման առաջարկվող տարբերակները և դրանց ազդեցությունը մատուցվող ծառայությունների որակի վրա:</p> <p>Վերը նշվածի մասին ՀՀ կառավարության աշխատակազմին տեղեկացվել է նաև 03.03.2017թ-ի N01/15.1/1308-17 գրությամբ:</p> <p>Շահագրգիռ մարմինների հետ ներկայումս քննարկման փուլում է գտնվում «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի</p>	
--	---	---	---	--



		<p>լավման, ծառայությունների որակի բարձրացման, ֆինանսական կայունության ապահովման, ինչպես նաև Ծաղկահովտի բժշկական կենտրոնի ֆինանսական կայունության և ծառայությունների որակի բարձրացման, ՀՀ Կոտայքի մարզի առողջության առաջնային պահպանման կենտրոնների միավորման, ինչպես նաև ՀՀ Շիրակի մարզի «Սամարիթեր» վերականգնողական կենտրոնը Գյումրու բժշկական կենտրոնին միավորելու վերաբերյալ առաջարկությունների մշակում և շահագրգիռ մարմինների հետ քննարկում:</p> <p>- Քննարման արդյունքներով ՀՀ կառավարություն առաջարկությունների ներկայացում:</p>	<p>նոյեմբերի 2-ի N 1911-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը՝ (օպտիմալացնել «Աշտարակի բժշկական կենտրոն» և «Ծաղկահովտի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունները): Միաժամանակ ՀՀ Կոտայքի մարզպետի 15.06.2017թ. թիվ 01/14.1/2585-17 գրությամբ առաջարկվել է ՀՀ Կոտայքի մարզի առողջապահական համակարգի օպտիմալացման գործընթացին անդրադառնալ 2018 թվականի սկզբին:</p> <p>Ընդունվել է ՀՀ կառավարության 2016 թվականի մայիսի 25-ի «Սամարիթեր վերականգնողական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին գույք նվիրաբերելու և ընկերության կանոնադրական կապիտալը նվազեցնելու մասին» թիվ 573-Ա որոշումը:</p>	
<p><b>Հավելված N 2</b></p> <p><b>Կետ67.</b></p>		<p><b>Հայաստանի Հանրապետության մարզային ենթակայության կրթական հաստատությունների օպտիմալացում</b></p> <p>- մազային ենթակայության կրթական համակարգի ֆինանսատնտեսական վիճակի և ծառայությունների մատուցման որակի բարձրացման պոտենցիալի վերլուծություն:</p>	<p>ՀՀ մարզերի հետ քննարկվել է օպտիմալացման ենթակա մարզային ենթակայության կրթական հաստատությունների հարցը: Ուսումնասիրվել է նշված հաստատությունների աշխատակիցների, աշակերտների թիվը, տարեկան բյուջեն, օպտիմալացման դեպքում կանխատեսվող խնայողությունների չափը, կրճատվող աշխատակիցների թիվը, կրթական հաստատությունների շենքային պայմանները, դպրոցների միջև եղած հեռավորությունը: Վերը նշվածի վերաբերյալ տեղեկատվությունը ՀՀ</p>	

		<p>- Մասնագիտական քննարկումներ շահագրգիռ մարմինների հետ:</p>	<p>կառավարության աշխատակազմ է ներկայացվել 03.03.2017թ-ի N 01/15.1/1287-17 գրությամբ:</p> <p>«ՀՀ Կոտայքի մարզի Զովաշենի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպելու և գույք հետ վերցնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը 19.04.2017թ. թիվ 01/15.1/2384-17 գրությամբ ներկայացվել է շահագրգիռ մարմինների քննարկմանը:</p> <p>«ՀՀ Կոտայքի մարզի Փյունիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպելու և գույք հետ վերցնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը 19.04.2017թ. թիվ 01/15.1/2394-17 գրությամբ ներկայացվել է շահագրգիռ մարմինների քննարկմանը:</p> <p>«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Աբովյանի N 8 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը և «Աբովյանի N 6 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը 19.04.2017թ. թիվ 01/15.1/2392-17 գրությամբ ներկայացվել է շահագրգիռ մարմինների քննարկմանը:</p>	
		<p>- Քննարկումների արդյունքներով ՀՀ Կոտայքի մարզի Զովաշենի հիմնական դպրոցը Հատիսի միջնակարգ դպրոցին, Փյունիկի միջնակարգ դպրոցը Արտավազի միջնակարգ դպրոցին միացնելու, Աբովյանի N 8 հիմնական դպրոցի և Աբովյանի N 6 ավագ դպրոցի (տալով միջնակարգ դպրոցի կարգա-</p>		

		<p>վիճակ) միաձուլման, ինչպես նաև վերլուծության արդյունքներով, ըստ անհրաժեշտության, մյուս մարզերի կրթական հաստատությունների վերակազմակերպման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում ՀՀ կառավարության աշխատակազմ:</p>		
<p><b>Հավելված N 2</b> <b>Կետ68.</b></p>		<p><b>Մարզային ենթակայության կրթական հաստատությունների բյուջեների և ծախսերի կատարման թափանցիկության ապահովում</b></p> <p>- Կրթական հաստատությունների 2016 թվականի բյուջեների և կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվությունների տեղադրում կրթական հաստատությունների և մարզպետարանների կայքէջերում:</p> <p>- Կրթական հաստատությունների 2017 թվականի բյուջեների և ծախսերի կատարման եռամսյակային հաշվետվությունների տեղադրում կրթական հաստատությունների և մարզպետարանների կայքէջերում:</p>	<p>ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 23.01.2017թ-ի N 01/15.1/300-17 և 22.02.2017թ-ի N01/15.1/1052-17 հանձնարարականների հիման վրա մարզային ենթակայության կրթական հաստատությունների 2016 թվականի բյուջեների և կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվությունները ՀՀ մարզպետարանների կողմից տեղադրվել են մարզպետարանների կայքէջերի «Տեղեկատվական կենտրոն» բաժնում: Վերը նշվածի վերաբերյալ տեղեկատվությունը ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել 22.02.2017թ-ի N 01/15/1014-17 գրությամբ:</p> <p>Կրթական հաստատությունների 2017 թվականի բյուջեների և ծախսերի կատարման 1-ին եռամսյակի տվյալները կամփոփվեն եռամսյակի ավարտից անմիջապես հետ և կձեռնարկվեն անհրաժեշտ միջոցներ սահմանված ժամկետում դրանք մարզպետարանների կայքէջերում տեղադրելու ուղղությամբ:</p>	